

նշված գեղչի իրավունքից օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր)։

բ/ Միևնույն ընտանիքից միաժամանակ սովորող երկրորդ (երրորդ) երեխաները՝ առաջին կուրսում։) Հաջորդ ուսումնական տարում (մինչև ավարտական կուրսում) նշված գեղչի իրավունքից օգտվում է (են), եթե նախորդ ուսումնական տարում ցուցաբերել է (են) ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր)։

գ/ Միակողմանի ծնողագուրկ երեխաների համար՝ առաջին կուրսում։ Հաջորդ կուրսում (կուրսերում (մինչև ավարտական կուրսում)) նշված գեղչի իրավունքից օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70 միավոր)։

դ/ Համալսարանի առաջին կուրսում՝ Համալսարանի ավագ դպրոց-վարժարանի աշակերտները։

3.2 Համալսարանում ուսման վարձի 30 տոկոս գեղչման իրավունքից օգտվում են հետևյալ անձինք՝

ա/ Համալսարանի մասնաճյուղերից առկա ուսուցմամբ հարկադրաբար Երևան տեղափոխված սվորողները։

բ/ Սիրիահայերը՝ երկրորդ և երրորդ կուրսում (կուրսերում), եթե նախորդ ուսումնական տարվա (տարիների) ընթացքում ցուցաբերել են բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 70-79 միավոր)։

3.3 Համալսարանում ուսման վարձի 50 տոկոս գեղչման իրավունքից օգտվում են հետևյալ անձինք՝

ա/ Միաժամանակ երկրորդ մասնագիտությամբ սովորողը՝ առաջին կուրսում։ Հաջորդ կուրսում (կուրսերում (մինչև ավարտական կուրսում)) նշված գեղչի իրավունքից օգտվում է, եթե նախորդ կուրսում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 90 միավոր)։

բ/ Ձուկված ազատամարտիկների չամուսնացած երեխաները՝ ուսումնառության ողջ ընթացքում։

գ/ Երկկողմ ծնողագուրկ երեխաները՝ ուսումնառության ողջ ընթացքում։

դ/ Սիրիահայերը՝ երկրորդ և երրորդ կուրսում (կուրսերում), եթե նախորդ ուսումնական տարվա (տարիների) ընթացքում ցուցաբերել է բարձր առաջադիմություն (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն 80-89 միավոր)։

4. Համալսարանում սահմանված անվանական կրթաթոշակները

4.1. Համալսարանում սահմանված են հետևյալ անվանական կրթաթոշակները՝

ա/ «Վիկտոր Համբարձումյան»՝ մրցութային կարգով շնորհվում է առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և գիտահետազոտական աշխատանքի ակնհայտ հակում դրսևորած սովորողին՝ նախապատվություն տալով համալսարանի բարձր տեխնոլոգիաներին ֆակուլտետի համապատասխան սովորողի.

բ/ «Հովհաննես Թումանյան»՝ 2 կրթաթոշակ՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի հումանիտար ֆակուլտետների, ինչպես նաև Ալավերդու «Թումանյան» մասնաճյուղի առնվազն 4 կիսամյակ անընդմեջ գերազանցիկ և հասարակական աշխատանքներում աչքի ընկած սովորողի.

գ/ «Նիկոլայ Ռիժկով»՝ 2 կրթաթոշակ՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի իրավագիտության կամ տնտեսագիտության ֆակուլտետի առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակելի վարքագիծ դրսևորած սովորողի.

դ/ «Վազգեն Սարգսյան»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության բանակում ծառայությունը հաջողությամբ ավարտած սովորողի.

ե/ «Կամո Ռիդումյան»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի հումանիտար ֆակուլտետներից որևէ մեկին՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակելի վարքագիծ դրսևորած սովորողի.

զ/ «Հյուսիսսափայլ»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի լրագրության ֆակուլտետի՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և ստեղծագործական աշխատանքներում հաջողություններ ունեցող սովորողի.

է/ «Աշոտ Փարեմուզյան»՝ 2 կրթաթոշակ՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի մանկավարժության, հայոց լզվի և գրականության կամ օտար լեզուների ֆակուլտետների՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և ակտիվ հասարակական աշխատանք կատարող սովորողի.

ը/ «ՌԻՍՄԱՆ նվիրյալ»՝ մրցութային կարգով շնորհվում է Համալսարանի Արթիկի բաժանմունքի՝ առնվազն 4 կիսամյակ գերազանցիկ և օրինակելի վարքագիծ դրսևորած և հասարակական աշխատանքներում աչքի ընկած սովորողի.

թ/«XXI դարի մասնագետ»՝ մրցութային կարգով մեկ տարի ժամկետով շնորհվում է Համալսարանի «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի հաղթողին:

4.2. Համալսարանի ռեկտորատի որոշմամբ կարող են սահմանվել այլ անվանական կրթաթոշակներ:

5. Հատուկ կրթաթոշակներ

5.1. Համալսարանում հատուկ կրթաթոշակներ ստանալու իրավունքիվ օգտվում են՝

ա/ Համալսարանի քոլեջն (այսուհետ՝ Քոլեջ) կարմիր դիպլոմով ավարտած շրջանավարտները Համալսարան ընդունվելու դեպքում առաջին կուրսում օգտվում են կրթաթոշակ ստանալու իրավունքից:

բ/ Քոլեջը գերազանց այլ առաջադիմությամբ (երբ ՄՈԳ-ը կազմում է առնվազն՝ 90 միավոր) Համալսարան ընդունվելիս Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ հատուկ կրթաթոշակ ստանալու իրավունքից կարող են օգտվել նաև հաջորդ կուրսերում:

5.2. Հատուկ կրթաթոշակների տեսակն ու չափը սահմանվում է Համալսարանի ռեկտորատ որոշմամբ:

5.3. Համալսարանի ռեկտորատի առաջարկությամբ և Համալսարանի ռեկտորի համաձայնությամբ կարող են սահմանվել այլ հատուկ կրթաթոշակներ:

5.4. Սույն կարգը ուժի մեջ է մտնում 2014թ թվականի սեպտեմբերի 1-ից:

